

խօսքը ստուգապէս գործածուած է հոտ հեծնելու սովորական իմաստով:

Միւս կողմէն կը տեսնենք Չաքարխայի (թ. 9) երբայեցերէն բնագիրը. «Ահա թագաւոր քո գայ առքեզ. . . հեծեալ ի վերայ իշոյ եւ յովանակի նորոյ»: որու մասին չորս Աւետարանիչներն ալ հեծնելու բռնական եղանակը կը հասկնան, վասնզի գործածուած բառն է յիւֆիպ (հեծնել):

Մեր քանդակի մասին ընդգրկուած մեկնութիւնը թէպէտև ըստ երևոյթին կը հեռանայ սովորաբար հետևուած աւանդութենէն, սակայն իրականին մէջ աւելի ճիշդ է և ճշմարտութեան մօտ: Այս քանդակագործը որ այս կերպով կողմնակի կը նստեցնէ՝ կը վերաբերի Բիւզանդական աւանդութեանց, թերևս այսպէս էր ուրիշ երկրի մէջ եւ ուրիշ թուականներուն (P. E. F. 1874, էջ 269):

3.— Ճեղքուած սիւնը. բեւեռները. փորուածոյ քարէ շուներու պատկերները. — Ս. Յարութեան դրան մօտ ճեղքուած սիւն մը կայ, որու մասին աւանդաբար կը պատմուի հետևեալը. երբ իսլամները Երուսաղէմը գրաւեցին, քրիստոնէից արգիլեցին Ս. Յարութիւն մտնելու եւ Ս. Չատկի տօնը կատարելու: Քրիստոնեաները այս արգելքին պատճառաւ իրենց պատրիարքին հետ Ս. Յարութեան գաւթին մէջ կ'աղօթէին մատնուելով խեղճութեան եւ դառնութեան: Չատկի ճրագալուցին՝ երբ հաւատացեալները հոն հաւաքուած էին, ժամը Գին ահագին որոտում մը եղաւ և իսկոյն վերոյիշեալ նկարած սիւնը ճառագայթեցաւ պայծառ լուսով մը ի մխիթարութիւն քրիստոնեաներուն: Իսկ իսլամները երբ տեսան այս լոյսը